Ընդհանուր հավասարակշռություն

Կառավարության տնտեսական քաղաքականությունը բազմաթիվ նպատակներ է հետապնդում, որոնց թվում առանձնակի կարևորվում են լրիվ զբաղվածության ու գների կայուն մակարդակի ապահովումը, ինչն ընդունված է անվանել ներքին հավասարակշռություն: Դրա հետ մեկտեղ հաճախ կարևորվում է արտաքին հավասարակշռության ապահովումը, այսինքն՝ ընթացիկ հաշվի հավասարակշռումը:

1955թ–ին Թրեվոր Սվանի առաջարկած աղյուսակում ընդհանրացվում է ֆիսկալ քաղաքականության դերը հավասարակշռության վերականգման խնդրում:

Ուղղահայաց առանցքն արտահայտում է իրական փոխարժեքը՝ արտահայտված միավոր արտարժույթի հաշվով ազգային արժույթի միավորներով: Հետևաբար առանցքով դեպի վեր ազգային արժույթը արժեզրկվում է, այսինքն՝ երկրի միջազգային մրցունակությունը բարելավվում է: Հորիզոնական առանցքն արտահայտում է պետբյուջեի դեֆիցիտը. դեպի աջ պետական գնումները աճում են և կամ հարկերը կրճատվում են:

IB ուղիղը պատկերում է իրական փոխարժեքի և բյուջեի դեֆիցիտի այն զուգորդությունները, որոնց դեպքում առկա է ներքին հավասարակշռություն, այսինքն՝ լրիվ զբաղվածություն և կայուն գներ: Ուղիղը վարընթաց է, քանի որ արժույթի իրական արժեվորման (առանցքով ներքև) դեպքում արտահանումը կրճատվում է, ներմուծումը՝ աճում, այսինքն՝ ամբողջական պահանջարկը կրճատվում է: Հետևաբար՝ լրիվ զբաղվածության պահպանման համար անհրաժեշտ է ֆիսկալ ընդլայնում՝ ամբողջական պահանջարկի կրճատումը կանխելու համար: *IB* ուղղից աջ տնտեսությունում առկա է ինֆլյացիոն ճնշում, քանի որ տրված փոխարժեքի համար ամբողջական պահանջարկը ավելին են, քան անհրաժեշտ է լրիվ զբաղվածության համար, իսկ ուղղից ձախ առկա է գործազրկություն, քանի որ ամբողջական պահանջարկը անբավարար է լրիվ զբաղվածություն ապահովելու համար:

EB կորը արտահայտում է իրական փոխարժեքի և բյուջեի դեֆիցիտի այն զուգորդությունները, որոնց դեպքում առկա է արտաքին հավասարակշռություն, այսինքն՝ ընթացիկ հաշիվը հավասարակշռված է: Կորը վերընթաց է, քանի որ արժույթի արժեզրկման (առանցքով վեր) դեպքում արտահանումը աճում է, իսկ ներմուծումը՝ կրճատվում, և, հետևաբար, ընթացիկ հաշիվը հավասարակշռության մակարդակում պահելու համար անհրաժեշտ է ֆիսկալ ընդլայնում՝ հակակշռող ներմուծման աճ պայմանավորելու համար: *EB* կորից աջ ներքին ծախսերը ավելին են, քան անհրաժետ է ընթացիկ հաշիվը հավասարակշռելու համար և, հետևաբար, ընթացիկ հաշիվը պակասորդով է, իսկ դեպի աջ, ընդհակառակը՝ ընթացիկ հաշիվը ավելցուկով է:

Գրաֆիկ 95: Սվանի աղյուսակը

s-ը իրական փոխարժեքն է, G-ն պետական գնումները, T-ն հարկերը



Այսպիսով՝ Սվանի աղյուսակը տարանջատում է տնտեսության «դժբախտ» վիճակի չորս հնարավոր տարբերակ: Թե ինչպիսի քաղաքականություն իրականացնի երկիրը, կախված է նրանից, թե «դժբախտության» որ տարբերակում է գտնվում երկիրը: Միայն մեկ կետում, երբ ուղիղները հատվում են, հաստատվում է և՛ ներքին, և՛ արտաքին հավասարակշռություն: Եթե վերախմբագրենք ռուս դասականին, ապա բոլոր երջանիկ երկրները նման են միմյանց, իսկ բոլոր դժբախտ երկրները դժբախտ են յուրովի:

Ենթադրենք տնտեսությունը սկզբնապես գտնվում է a կետում, որում առկա է և՛ ինֆլյացիա, և՛ ընթացիկ հաշվի պակասորդ: Եթե վարվում է ֆիքսված փոխարժեքի քաղաքականություն, ապա միայն ֆիսկալ գործիքների կիրառմամբ հնարավոր է հասնել կամ միայն ներքին հավասարակշռության, կամ միայն արտաքին հավասարակշռության: Ակնհայտորեն, միաժամանակ, և՛ ներքին, և՛ արտաքին հավասարակշռության վերականգման համար երկիրը պետք է ֆիսկալ սահմանափակումը զուգորդի արժույթի դեվալվացման հետ:

Այն, որ n թվով նպատակների իրագործման համար անհրաժեշտ է կիրառել n թվով գործիքներ, ապացուցել է Նոբելյան մրցանակակիր Յան Տինբերգենը: